

Տ. ԱՐԻՍՏԱԿԵՍ ՔԱՂԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(21 նոյեմբերի 2004 թ.)

Սիրելի հավաքացյալ քույրեր և եղբայրներ,
Քառասուն օրեր առաջ էր, երբ ես և իմ օժակից 18 եղբայրները, հնազանդ ապրվածա-
յին կոչմանը և ազգիս Վեհափառ Հայրապետ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գա-
րեգին Երկրորդի կանչին, Ձեր բոլորի աչքերի առաջ ծնրադրեցինք այս Սուրբ եկեղեցու
Ավագ Ս. Մեղանի առջև՝ մեր ուխտը կապելով Աստուծո հետ մշտապես ծառայելու Իր ժողո-
վրդին, լինելու հովիվներ Իր հոգիի համար և սպասավորները մեր Տիրոջ կենդանարար
Մարմնի և Արյան ծառայության:

Սիրելիներ,

Սրանից շուրջ փասը փարիներ առաջ ես իմ քայլերն ուղղեցի դեպի Սևանա Վազգեն-
յան Հոգևոր Դպրանոց, որ եղավ իմ կյանքի, իբրև հոգևորական անձ, ձևավորման այն հո-
գևոր դարբնոցը, ուր ես դեռ պատանեկան մրաժուսմանով և հույզերով ու կենսախնդու-
յամբ մուտք գործելով, որպես նոր մարդ վերագրա ինքս ինձ՝ րեսնելով ինձ մեր Տիրոջ ան-
մնացորդ ծառայելու նվիրական գործի մեջ միայն:

Ուսրի ես իմ որդիական երախտագիտության ու շնորհակալության խոսքն եմ ցանկանում
ասել Նորին Սրբությանը, Ով իմ փկար անձի մեջ րեսավ Առաքելական մեր Մայր Եկեղե-
ցու ծառայությանը պարտաստ անարժան սպասավորիս, դեռ ես իմ ուսանողության փարի-
ներից լինելով ինձ համար հոգևոր ծնող, ուսուցիչ, դաստիարակ, իր անձով դառնալով մեզ
բոլորիս համար անմնացորդ նվիրումով հոգևորականի այն առաջնորդող կերպարը, Ում
մեծապես պարտական ենք թե՛ մեր ուսման և թե՛ այսօր արդեն որպես հոգևորական լինելու
համար:

Իմ որդիական սերն ու գնհարանքն եմ ուզում բերել նաև մեզ ձեռնադրող Սրբազան Հո-
րը՝ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանին, որ սիրահոծար կերպով հանձն
առավ իր եպիսկոպոսական օծումից դեռևս մյուսոնաբույր աջով կարարել իր անդրանիկ
ձեռնադրությունը՝ րալով քահանայական ասրիճան, դառնալով մեզ համար Ասրվածային
Ս. Շնորհների փոխանցողը, մեր Հոգևոր Ծնողը:

Իմ խոնարհումը և սերն եմ ուզում արարահայրել հանդեպ երկու Հոգևոր Ծնարանների՝
Վազգենյան և Գևորգյան, որոնց հարկի ներքո ամբարեցինք այն հոգևոր գիտելիքները և
կյանքի փորձառությունը, որի բարի պրուղն եմ քաղում հիմա իբրև հոգևորական:

Ես իմ երախտագիտությունն եմ հայրնում նաև Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր
եկեղեցու ողջ պաշտոնեությանը՝ ի դեմս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Անուշավան վրդ. Ժամ-
կոցյանի, որ, համարել Ս. Էջմիածնի Մայր Տաճարի լուսարարապետության, մեծ վայել-
չությամբ կազմակերպեց ոչ միայն մեր ձեռնադրության Ս. Խորհրդի ողջ արարողությունը,
այլ նաև արրոնեց ինձ իմ առաջին այս Ուխտի Ս. Պարարագը մարուցել՝ ի նշանավորումն

քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի կառուցված այս փառահեղ եկեղեցում:

Իմ սերն ու շնորհակալությունն եմ ուզում հայտնել նաև Մայր Աթոռի ողջ միաբանությանը, որ մեր բառաստօրյա պահեցողության շրջանում մշտապես գորավիզ և աջակից եղան մեզ իրենց աղոթքներով և բարի խորհուրդներով՝ կիսելով մեզ հեպ իրենց հոգևոր կյանքի անձնական փորձառությունները:

Իմ որդիական սերն ու խոնարհումը նաև ծնողներիս, ովքեր երբ իմ առաջին քայլերն էի ուղղում դեպի վանք, դեպի հոգևոր կյանք, երբեք իրենց մարդկային ցանկություններով առաջնորդված որևէ կերպ չմիջամտեցին իմ որոշումներին, այլ իրենց ծնողական օրինությամբ ինձ իբրև ընծա նվիրաբերեցին Աստծուն և մեր ժողովրդի ծառայությանը:

Եվ, ի վերջո, իմ շնորհակալությունն ու սերը Ձեզ, սիրելի բարեպաշտ հայորդիք, որ մեր ձեռնադրության ժամանակ աղոթակից և գորակից եղաք մեզ՝ հավաստելով Աստուծո և մարդկանց առջև, թե՛ «Արժանի են»:

«Ահա մայր քո»:

(Նովի. ԺԹ 27)

Սիրելիներ, այսօր Առաքելական մեր Մայր Եկեղեցին փոխում է երեքամյա Ս. Կույս Մարիամի՝ փաճարին ընծայման հիշատակությունը: Աստվածամայրը, ինչպես քաջ գիտենք, զավակն էր Նովակիմի ու Աննայի, որոնք երկար տարիներ զավակ չէին ունենում և իրենց հոգիներում ուխտ էին արել Աստծո հետ, որ եթե զավակ ունենան, նվիրելու են Աստծուն: Հինկտակարանյան ընկալմամբ, եթե որևէ ամուսնական զույգ զավակ չէր ունենում, համարում էին, որ նրանց մեղքերի պատճառով է, որ Աստված զրկել է նրանց որդեծնությունից, և համարվում էին մեթժելի հրեական շրջանակներում: Նույնն էր պարագան նաև Նովակիմի և Աննայի: Սակայն Աստված մեկ այլ ծրագիր ուներ իրականացնելու այդ երանելի սուրբերի կյանքում: Աստված նրանց առաջացած տարիքում մի դուստր պետք է պարզներ, ով պետք է դառնար «Անարատ փաճար, բնակարան անբաւ Բանին Աստուծոյ» (Շարական):

Եվ այդպես էլ լինում է, երբ ծնվում է Մարիամը, ծնողները նրան բերում են Զաքարիա քահանայապետի մոտ՝ երեք տարեկան փոքրիկ Մարիամին նվիրաբերելու Աստծուն: Ավանդությունը պատմում է, որ երբ փոքրիկին ներս են տանում փաճար, աղջնակը, առանց դժվարության կամ որևէ մեկի օգնության, բարձրանում է Տաճարի տասնհինգ աստիճաններով, որ տանում էին դեպի Ավագ Մեծ Մեղան: Այս դեպքը մեծ զարմանք է պատճառում բոլորին:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ,

Ո՞րն է այսօրվա խորհուրդը, որ գալիս է դեպի մեզ Ս. Աստվածածնի անձի միջից:

Սիրելիներ, ցանկանում եմ, որ մի պահ Ձեր հոգու աչքերով վերհիշեք նորկտակարանյան բոլոր պատումները, ուր առկա է Ս. Տիրամայրն իր կենդանաբար ներկայությամբ: Մեր Տերը երբ ծնվեց Ս. Կույսից, երբ իր աստվածային աչքերը բացեց՝ մարդկային աչքով տեսնելու համար աշխարհն ընդհանրապես, առաջինը, որ տեսավ, Ս. Կույսն էր՝ Իր մայրը: Մեր

Տիրոջ աշխարհային կյանքի բոլոր հանգուցային պարագաներում, ինչպես Ավետարանն ու Սրբազան Ավանդությունն են մեզ վկայում, Ս. Տիրամորը Նրա կողքին կանգնած ենք փես-
 նում թե՛ պարզ ժողովրդի հետ շրջելիս, թե՛ քարոզելիս, թե՛ հրաշագործելիս և, մանավանդ,
 Քրիստոսի երկրային կյանքի վերջին մի քանի օրերին, երբ մալոնվեց, փանջվեց, խաչվեց,
 թաղվեց և ապա հրաշափառապես Հարություն առավ: Ուզում եմ հիշել մեր Տիրոջ խաչելու-
 թյան դրվագը, ուր նորից կանգնած ենք փեսնում Ս. Կույսին՝ իր որդու և մեր Տիրոջ խաչի
 առջև: Այսինքն՝ մեր Տիրոջ երկրային ամբողջ կյանքի ընթացքը փեսնում ենք Աստվածամոր
 աչքի առաջ, քանզի մեր Տերն աչքերը բացեց՝ փեսնելով Աստվածածնին, ապրեց՝ Իր մորը
 մշտապես Իր աչքի առաջ ունենալով, մեռավ՝ կրկին Աստվածածնին փեսնելով:

Ոչ ոք այնքան չսիրեց, որքան Աստվածամայրը, ոչ ոք այնքան հնազանդ չեղավ, որքան
 Նա, ոչ ոք այնքան չբառապեց, որքան Նա:

Մենք, իբրև քրիստոնյա երբ մտնում ենք եկեղեցի, մեր հայացքն ուղղում ենք դեպի արե-
 վելք, դեպի Ս. Մեղան, ուր աներևութապես ներկա է Աստված, և նորից փեսնում ենք Ս. Խո-
 րանի վրա հրաշագեղորեն բազմած Տիրամորը, ու նորից՝ երբ դուրս ենք գալիս եկեղեցուց,
 մեր վերջին հայացքը դարձյալ ուղղված է Տիրամորը:

Քրիստոս խաչի վրա, մահվան ահավոր չարչարանքների մեջ ևս անփես չարեց Իր «նոր
 ժողովրդին», նորակազմ Եկեղեցուն, այլ նորից ու նորից ներելով մեզ, Աստված թողություն
 հայցելով մեզ համար, հաստատեց՝ «Հայր, ների՛ր նրանց, քանզի չգիտեին, թե ինչ են անում»
 (Լուկ. ԻԳ 34), և իր այս ներողամտության ու թողության որպես գրավական Իր մորը
 հանձնեց իր սիրելի աշակերտներից Հովհաննեսին՝ ասելով. «Ահա մայր քո»՝ ի դեմս Հով-
 հաննես Ավետարանի հաշտվելով մարդկային ցեղի հետ: Քրիստոս Իր ամենամկրակյալ
 զգացումները, որ ուներ, ամենաառաք սերը, որ Տիրոջից հորդում էր դեպի ողջ մարդկութ-
 յունը և առավել՝ դեպի Աստվածամայրը, հանձնեց աշակերտների պահպանությանը: Որդի-
 ական խոր հարգանքի և ակնածանքի վառ այս դրսևորումը մեր աչքերի առաջ և մեր հոգում
 պարզում է, մեր սրտերում վերստին հնչեցնում աստվածային պարզամը, թե՛ «Պատուեայ
 զհայր քո եւ զմայր քո» (Ելք Ի 12):

Միրելի բարեպաշտ հավաքացյալներ,

Մեր Տիրոջ Հրաշափառ Հարությունից հետո Նրան աշակերտած քրիստոնյաների հա-
 մար իբրև աներևույթ հոգևոր գանձ մնացին Քրիստոսի պարգամները և աստվածային
 ճշմարտությունների ուսուցումները, իսկ իբրև փեսանելի հիշողություն՝ Աստվածամայրը:
 Տիրամոր նկատմամբ այսպիսի մեծ սերն ու ակնածանքը քրիստոնեության ողջ կյանքի ըն-
 թացքում իր արտահայտությունը գտավ արդեն քրիստոնեական Ս. Տաճարների և Տիրա-
 մորը նվիրված շարականների միջոցով: Ինչպես քաջ գիտենք, մեր վաղ շրջանի բոլոր եկե-
 ղեցիները նվիրված են եղել Ս. Աստվածածնին, այսինքն՝ Աստվածամայրը իր փեսանելի
 կերպարի մեջ մեզ՝ քրիստոնյաներիս համար միշտ եղել է մեր Տիրոջ փունը՝ Ս. Եկեղեցին:
 Եվ պարտական չէ, որ մեր բոլոր եկեղեցիների Ս. Մեղանները զարդարում են Տիրամոր
 պարկերները՝ մանուկ Հիսուսը գրկին:

Միրելիներ, Տիրոջ խոսքը՝ «Ահա մայր քո», ժամանակային սահմանափակում չի ճանա-
 ցում. ուղղված չէր միայն Ս. Հովհաննես Առաքյալին, այլ այն նաև երկու հազարամյակի

խորքից եկող հորդոր է յուրաքանչյուր մեկիս, որ Տերը պարգամում է՝ ասելով. «Ահա մայր քո», այսինքն՝ որդյակ, այս Եկեղեցին է քո մայրը, հոգ փար նրա համար:

Սիրելիներ, ինչպես մեր Տերը սիրեց իր մորը, նույն այդ սիրով նաև մեզ պարգամեց սիրել Իր Ս. Եկեղեցին, իբրև սիրասուն մոր, որ ամեն վայրկյան մեր աչքի առաջ փեսնում ենք: Ինչպես Աստվածածինը Քրիստոսի կյանքում, այնպես էլ Եկեղեցին ներկա է մեր կյանքի յուրաքանչյուր պահին, քանի որ ծնվում ենք Եկեղեցու Ս. Ավագանում, մեր կյանքի յուրաքանչյուր հանգուցային պարագա առանց Եկեղեցու կենսական ներկայության չի անցնում, և ի վերջո մահանում ենք՝ նորից Եկեղեցուց ճանապարհվելով առ Աստված: Ուստի Ս. Եկեղեցին Աստվածամոր նմանությամբ ներկա է մեր կյանքերից ներս:

Սակայն մենք ոչ միշտ է, որ մեր Տիրոջ օրինակով հնազանդ ու հոգափար ենք մեր մոր հանդեպ, որ աստվածակառույց Հայոց Եկեղեցին է: Արդյոք մենք զավակի այդ խոնարհությամբ սիրո՞ւմ ենք մեր Մորը:

Ուստի, սիրելիներ, իմ հորդորն է ու պարգամը՝ Տիրոջ խոնարհությամբ և հնազանդությամբ սիրենք մեր Մայր Եկեղեցին, դուրս չմղենք մեր կյանքերից մեր ծնողին, այլ մշտապես անառակ որդու օրինակով վերադառնանք մեր մոր գիրկը՝ հաստատելով Ս. Եղիշեի՝ դարերի հոլովությամբ ու պարմության քառուղիներով մեր ազգային հավաքականությունը առաջնորդած խոսքը. «Մենք իբրև Հայր ճանաչում ենք Ս. Ավետարանը, իսկ իբրև Մայր՝ Առաքելական Ս. Եկեղեցին» (Եղիշե):

«Ընորհ, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ, ընդ ամենէսեանսդ. ամէն»: